Սայաթ Նովա

Յիս մե դարիք բուլբուլի պես

Էս Արութինի ասած է. դազալի: Էս էրկու խաղը մի հանգով է, ով որ սովորի Դոստի խաղի ձենով ասի, թե որ չիմանաս հարցրու թե՝ Գոզալար յիղնաղինա բախ, դաստա-բեդաստա թարփանուր:

Յիս մե դարիք բուլբուլի պես, դուն օսկե դափազի նըման.
Էրեսըս դի վուտիդ տակը՛ ա՛նց կաց, փիանդազի նըման.
Յա՛ր, քեզիդ խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմազի նըման.
Աչաիք սուրաթի տեր իս՝ ռանգըդ է գուլգազի նըման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեչը, աչայիք սեյրան իս անում,
Ծուխկդ արեգազի նըման է՝ տեսնողին հեյրան իս անում.
Ջիգարըս կըրակ իս տըվի, էրվում իմ՝ բիրյան իս անում.
Վո՞ւնց մե գոզալ չէ ունեցի՝ էտ քու արած նազի նըման:

Հենց իմացի, յա՛ր, քու ղուլն իմ, թանգ հախով գընած չըրաղ իմ,
Յա՛ր, դըռանըդ նընգած ըլիմ, օ՞վ տեսնե, ասե՝ տուսաղ իմ.
Էշխեմեդ հիվանդացիր իմ, վո՞ւնց մեռնում իմ, վո՞ւնց թե սաղ իմ.
Ծովի պես ուրդան իմ տալի, գըժվիլ իմ Արազի նըման:

Օվ կու տեսնե, ջունուն կու լի, բարգ էրեսիդ խալ իս անում,
Էլ ջուքամը դո՞ւն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.
Յա՞ր, յիս քիզ բարով իմ տալի, շուռ իս գալի, դալ իս անում,
Չունքի խոսկըդ անց է կենում բելլու՝ շահ-անդազի նըման:

Սայաթ Նովեն ասաց՝ զու լամ, չիմ լաց լի՝ թե ճար ունենամ.
Էլ յիս կու քաշիմ Էս դուսեն՝ թո՛ղ լի ահ ու զար ունենամ.
Յա՛ր, քիզ վըրեն արք ունենամ, մե լավ իխտիար ունենամ՝
Առնում, տանիմ մեջլիսները օսկեջրրած սազի նըման: